КЭРОЛАЙН КОКС, ДЖОН АЙБНЕР. Этническая чистка продолжается. Война в Нагорном Карабахе, изд-во «Гитутюн», Е., 1998, 106 с.

ՔԵՐՈԼԱՅՆ ՔՈՔՍ, ՋՈՆ ՀԱՅԲՆԵՐ, Էթնիկական մաքրումը շարունակվում է. Պատերազմ Լեռնային Ղարաբաղում, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 1998, 106 էջ։

«Միթե աշխարհը ճանապարհին մի կողմ կմնա և կհաշտվի հայկական նոր ցեղասպանության հետ»: *Այս վերջին նախադասությունն է բարոնուհի Քերոլայն Քոքսի 1993 թ. հրատարակած «Էթնիկական մաքրումը շարունակվում է. Պատերազմ Լեռնային Ղարաբաղում» գրքի, և այս նախադասության պատասխանը դեռևս հստակեցված չէ։ Իսկ գիրքը, որ գրված է հարցը ճանաչողի հարցազրույցների հետևողականությամբ, ոչ միայն դեպքերի հաջորդական ընթացքի անաչառ շարադրանքն է, այլև պարունակում է լուրջ վերլուծություն պատճառահետևանքային կապերի, և երևույթների սեփական արժեքավորում։ Հայ հասարակայնությանը ավելորդ է հիշեցնել բարոնուհի Քերոլայն Քոքսին, սակայն նրա գիրքը հայ ընթերցողին ներկայացնելիս արժե մեկ անգամ վերհիշել, որ հեղինակը 35 անգամ եղել է Լեռնային Ղարաբաղում թեկուզ և նրա համար, որպեսզի գնահատենք գրքի շարադրանքի իրավական և փաստական աղբյուրները. առաջին հերթին դա իրական ճանաչողությունն է։ Գրքի անգլերեն հրատարակությունից հինգ տարի անց, 1998 թ., ռուսերեն հրատարակության նախաբանում Քերոլայն Քոքսը, համառոտ ամփոփելով պատերազմի պատմական պատճառների հարցը, շարունակում է մնալ 1993 թ. իր բացահայտած ճշմարտության դիրքերին. «Ղարաբաղը ադրբեջանցիների տարածք ճանաչելու ո՛չ բարոյական, ո՛չ պատմական հիմքեր գոյություն չունեն։ Այս փաստարկումը իրավական հիմքեր չունի. հեղինակը ճանաչում է այդ երկիրը, ուսումնասիրել է խնդիրը, կրել բոլոր ելևէջներն ու ընթացքը։ Ազգային շրջանը վաղուց արդեն տեղի է տվել վերլուծությանն ու համադրմանը, ուստի նա իրավունք ունի հայտարարելու, որ «Քաղաքագետներից և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից շատերը, ովքեր Ղարաբաղի ապագան որոշելու հետ կապված կարևոր վճիռներ են կայացնում, երբեք չեն այցելել այս հնագույն հայկական հողը։ Այդ պատճառով նրանք հաճախ չեն պատկերացնում Ղարաբաղյան հակամարտության քաղաքական լուծմանը մոտենալու ողջ բարդությունն ու սրությունը, ինչպես նաև պատմական համատեքստը»։ Ինքը՝ Քերոլայն Քոքսը, գրել է օբյեկտիվ ճշմարտությունը. այն ճշմարտությունը, որը նրան իրավունք է տվել իր գրքում իր իսկ եզրակացությունները ամփոփել մի կարճ նախադասությամբ. «Ակնհայտ փաստերը մատնանշում են Թուրքիայում ազգային փոքրամասնությունների հանդեպ ցեղասպանության և Լեռնային Ղարաբաղի պատերազմի պատմական ժառանգորդները։ Քերոլայն Քոքսը տեսնում է այդ «ակնհայտ փաստերը», յուրաքանչյուր սթափ մարդ կարող է տեսնել այդ փաստերը. դրանք չափազանց պերճախոս են։ Ինչու, ուրեմն, «չեն տեսնում»։*

*Ղարաբաղյան պատերազմի հանդեպ վերաբերմունքով «դեմոկրատական» արևմուտքը, արևմտյան պետությունների ղեկավարները, միջազգային դեմոկրատական կազմակերպությունները հնարավորություն ունեին ապացուցելու իրենց դեմոկրատական լինելը։* Նրանք այդ չարեցին: *Հարց է ծագում, արդյոք դրանք դեմոկրատական են։ Կամ՝ արդյոք այդ է դեմոկրատիան։ Ղարաբաղյան պատերազմը, ցավոք, հիանալի առիթ էր այդ հիմնարար բանաձևերը հաստատելու կամ վերանայելու։*

*Դառնանք, սակայն, գրքին այն մարդու, որ իր պահվածքով ապացուցեց իր դեմոկրատական լինելը։ Գիրքը, ինչպես ասվեց, շարադրվել և առաջին անգլերեն հրատարակությունն ունեցել է 1993 թ.։ Անգլերեն հրատարակության նախաբանում Քերոլայն Քոքսը անհրաժեշտ է համարել որոշ նախազգուշական ճշգրտումներ անել, ի թիվս որոնց. ա) Պատերազմը Լեռնային Ղարաբաղում թուրք և հայ ժողովուրդներ ավանդույթների և հասարակական ինստիտուտների միջև պատմական պայքարի մեկ էպիզոդ է, բ) Ադրբեջանի թուրք ժողովրդի հա-*

սար տեղանուն անգլիական անուն դնելս ջ. ամրագրելիս Գիտական հին աշխատություններում նրանց անվանում էին «թաթարներ» ի Բեգս Ռուսական կայսրության այլ խոշորաչափ և մահմեդական ժողովուրդներին։ Մեր օրերի մամուլում նրանք անվանվում են «ազերիներ» կամ «ադրբեջանցիներ»։ Ակադեմիական աշխատանքներում նրանց հաճախ կոչում են «թուրք-ազերիներ» կամ «ադրբեջանական թուրքեր» (էջ 17—18)։ Այս ձևակերպումները վկայում են հարցի պատմական արմատներին անդրադառնալու հեղինակի ձգտումը, քանի որ էթնիկ անունների կամ ազգային ինքնագիտակցության և կայացած անունները հաճախ հետևանք են էթնոգենեզի և քաղաքական պատմության։ Տվյալ դեպքում ղարաբաղյան հակամարտության երկու կողմերից մեկը, ինչպես լիարժեք էթնիկ հանրություն, գտնվում է կայացման փուլում, ինչ արտահայտվում է նրա անվան բազմազանությամբ և ոչ միարժեք ըմբռնման մեջ։ «Ազերի» անունը, ինչ դույցն «Ադրբեջան» անվան կրճատ ձևն է և շրջանառության մեջ է մտել վերջին 10 տարիներին, ինչպես դրսևորում ունեցող և կիրառվող անունների շարքում ամենաքիչը պիտի հավակնություն ունենա Ադրբեջան-Ադրբեջանի տարածքի թրքալեզու բնակչության հավաքական էթնոնիմը լինելու։ Այն խորթ է ինչպես իրենց՝ Ադրբեջանի տարածքի թրքալեզու բնակչությանը, այնպես էլ հարևաններին, որոնք նրանց շարունակում են կոչել XX դ. սկզբին արդեն ավանդականացած անուններով (թաթարներ՝ վրացիները, թուրքեր՝ հայերը, փադարներ՝ Դաղստանի հարավի ժողովուրդները և այլն)։ Էթնոնիմների կիրառման հակասականությունը, սակայն, դրսևորվում է նաև Քերոլայն Քոքսի մոտ, նույնիսկ անունների դաշտը ճշտելուց հետո։ Մասնավորապես, էջ 22-ում վավերացվում է. «Այսօր ավելի քան 5 մլն ազերիներ ապրում են Ադրբեջանական հանրապետությունում... Մոտ 15 մլն ազերիներ բնակեցված են Իրանի հյուսիս-արևելքում։ 1988 թ., Լեռնային Ղարաբաղի ներկայիս հակամարտության սկզբում, այնտեղ ապրում էր մոտ 40 հազ. ադրբեջանցի»։ Չխոսելով Իրանի մասին (Իրանի հյուսիսում թրքախոս բնակչության թիվը երբեք չի հասել 15 մլն-ի), նշենք միայն, որ մասնավորապես Իրանում թրքախոս բնակչությունը ներկայացված է մի շարք ժողովուրդներով (ավշարներ, ղարափափախներ և այլն), որոնք երբեք մեկ միասնական էթնոս չեն եղել և չեն հայտնում հավաքական էթնանվան, առավել ևս «ազերի» էթնիկ անվան, որը ըստ էության, միջնադարից հայտնի իրանալեզու ժողովրդի անունն է։ Սակայն խնդիրը միայն անունների մեջ չէ, խնդիրը նաև և առավել հիշյալ խմբերի էթնոգենետիկ տարբերությունների և էթնիկ կայացման մակարդակների տարբերության մեջ է։ Թրքալեզու այս երկու համախմբերին միավորող գլխավոր օղակը ներկայիս Ադրբեջանի Հանրապետության մի մասի՝ Շիրվանի հատվածում ձևավորված յուրահատուկ «ադրբեջանական» էթնոցեղային կազմավորումներն են, որոնց նախնիների մի հատվածը Իրանի հյուսիսի թրքալեզու ժողովուրդների մեջ է արտահայտված, մյուս հատվածը՝ ներկայիս Ադրբեջանի Հանրապետության տարածքի ցեղերի՝ ավանդական կովկասալեզու ժողովուրդների, իրանալեզու թաթերի, հայալեզու հայերի, 11-րդ դարից այստեղ եկած սելջուկյան էթնոցեղային միավորումների և այլոց հետ խառնման ճանապարհով առաջացած, որ հայտնի է դառնում աշխարհին «ազերիներ» և «ադրբեջանցիներ» անուններով։ Դրանք տարբեր խմբեր և տարբեր ժողովուրդներ են, տարբեր պատմաշրջափուլերի անցյալի և տարբեր աշխարհընկալման ու էթնիկ ինքնագիտակցության դրսևորմամբ։ Ադրբեջանի «թուրք-ազերիների» էթնիկ ինքնագիտակցության առանցքն այդ պատճառով, ինչպես նկատել է Ք. Քոքսը, դավանանքն է, մահմեդականությունը։ «Ազերի-թուրք լինել,—գրում է նա,—նշանակում է մահմեդական լինել։ Թուրք-ազերական համայնքի անդամներից «թուրք-իսլամական» հավատարմությունն ինքն իր մեջ հակասություն է պարունակում» (էջ 23)։ Հիրավի, միայն մշակույթով և էթնիկ գիտակցված տարրերով, մահմեդականությունը ոչ միայն առաջնային է բազմամարդում և բազմադրօշ էթնիկ խմբի, այլև խաղացել և խաղում է էթնանվան ֆունկցիա. «Ես մուսուլման եմ, դու հայ»,— սա գրեթե բանաձև է Ադրբեջանի տարածքի թրքալեզու բնակչության ներկայացուցիչների ըմբռնող մասի՝ էլիտի (ոչ դավանական) խմբերի և միավորումների շարքում ինքն իր անդր սահմանափակելու։ Այս բանաձևը գործում էր ոչ միայն անցյալ դարում կամ 20-րդ դարի սկզբին, երբ այդ տարածքի պաշտոնական պատմագրությունը մոլորվել էր դեռևս չձևավորված խմբի էթնիկ ծագման ցանկալի տարբերակի որոշման հարցում (թուրքական, աղվանական, իրանական), այլև այսօր, երբ նույնքան հրատապ է մնում ինչպես ծագման ցանկալի տարբերակի ճշգրտման խնդիրը, այնպես էլ հավաքականության էթնիկապես ամրապնդելու հարցը։ Սակայն քաղաքական մտածողությունը, ցավոք, մի բան է, իրական ինքնագիտակցությունը՝ երբեմն՝ այլ բան։ Այդ իրական ինքնագիտակցու-

թյունը՝ քաղաքական և էթնիկական, նկատել է լեդի Քերոլայն Քոքսը, թեև ինքը պատմաբան չէ, գիտնական չէ։ Նա նկատել է, որ «Բոլոր-ազգայինները» քաղաքական «Աշխարհայացքի» շարունակողներն են («Քաղաքակրթությունների հակամարտության» գիրքի բաժինները՝ «Թրքացում», «Աշխարհի պատերազմ», «Հուլիսը և Հորոս», «Թուրքական հզորության մարտահրավեր», «Պանթյուրքիզմ», լուսինկարով «Գենոցիդ» գլուխը «1890-ական թթ. ջարդերը», «Երիտթուրքերը» բաժիններով, «Պանթյուրքիզմի ծնունդը» գլուխը «Գենոցիդի ծիլեր Ադրբեջանում», «Պանթյուրքիզմի ողբերգություն», «Պայքար հանուն Լեռնային Ղարաբաղի» բաժիններով), ինչ վերաբերում է Աշխարհամարտի ժամանակաշրջանին և Գուրգեն պատմաբանի կողմից տրամադրված հետազոտական նյութին, լեդի Քերոլայն Քոքսի կողմից մոտեցումը, որպես առաջնային մշակութային և հոգևոր արժեք, գերադասված է, ուշադրության կենտրոնում պահելով համար թուրքական գործող ուժերը՝ հատկապես Հայաստանի ռազմական գործողությունները (առավել ևս, երբ այդ տարածքը ավելի հաճախ նշվում է) ազգային պայքարը որպես սկսել էր Օսմանյան Թուրքիայում, ինչպես նշում է տիկին Քերոլայն Քոքսը, նաև Ադրբեջանի Հանրապետությունը նույն թվում նաև խորհրդային, որը հաջողությամբ իրականացրեց իր խնդիրը Նախիջևանում և սրանք ջանք գործադրեց՝ ամբողջությամբ ոչնչացնելու Լեռնային Ղարաբաղի Վարանդան, որպես այդպիսի օգտագործելով գիտնականների առաջնորդությամբ էթնիկ անկլավը։ Քերոլայն Քոքսը, հիշելով գիտնական գիտնականների կողմից ձևավորված պատմությունը 1918 թ. օգոստոսի Բաքվի կոտորածների մասին, որ օգնության էր թողել հայերին ուժեղացնելու իրենց առաջնորդները նրանց (Թուրքիա—Հ. Խ.) նպատակն է եղել (Հայերին—Հ. Խ.) ոչնչացնել ամբողջ և ամբողջապես ոչնչացնելու» (էջ 41)։ Քերոլայն Քոքսը ուշադրություն է դարձնում պատմական շարունակականության տրամաբանությանը, 21-րդ դարի, երբ նույն չփոխվեց ժամանակը և ընդհանուր արդյունքը ցույց տալով կարելի էր ասել, որ իսկապես սա նույնն էր 80 տարի ընդմիջումով ողբերգական պատմության կրկնություն։ Քերոլայն Քոքսի փաստարկներից մեկն է՝ ցույց տալը, որ XX դ. սկզբի ադրբեջանցիները և ներկայիս Ադրբեջանը շարունակողն են Օսմանյան Թուրքիայի ցեղասպանության քաղաքական ծրագրերի։ Հիշելով էնվեր փաշայի 1918 թ. սեպտեմբերի կոչը Լեռնային Ղարաբաղի դեմ, հեղինակը մանրամասնում է Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության միջև ընկած շրջանը ամբողջովին հայաթափելու խնդրանքը (էջ 42), որից հետո, այդ ավելով Բրիտանիայի օժանդակությամբ, «Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի դեմ սկսեց սով և տեռորի քաղաքականություն» 1919 թ. օգոստոսի 22-ին, սովից ու հալածանքներից հոգնած, Ղարաբաղի հայերի 7-րդ համագումարը որոշում ընդունեց ադրբեջանական իշխանությունը ժամանակավորապես ճանաչել՝ մինչև Ադրբեջանի սահմանների վերջնական որոշման վճիռը կլինի։ Ադրբեջանը դրան պատասխանեց ողջ Ղարաբաղի տարածքային ինքնավարության և նրա հայ բնակչության ազգային-մշակութային ինքնավարության մասին որոշումով։ Սակայն շուրջ հայ բնակչությունը չէր տեսել հանցագործությունների, սպանությունների և տնտեսական ճնշումների այնպիսի սանձարձակում, ինչպես համաձայնության պայմանագրությունից հետո» (էջ 43)։

Տեսնենք շարունակությունը. 1991 թ. սեպտեմբերի 23-ին Ռուսաստանի, Ղազախստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև կայացավ Ժելեզնովոդսկի համաձայնությունը «Ադրբեջանի կողմից շրջափակումը դադարեցնելու, պատանդների փոխանակման, տեղահանված և հայրենադարձության նորմալ ուղիներ բացելու շուրջ։ Ցավոք, այդ խաղաղարար համաձայնությունները մնացին չկատարված, շրջափակումը շարունակվեց և Լեռնային Ղարաբաղը շարունակեց մնալ փակ, բոլոր կողմերից կտրված թշնամական անկլավ։ Այսպիսի քաղաքական իրադրությունը կատալիզեց Ադրբեջանը, համոզված մեծ հայերի առաջացրած թուլության նշանը համարելով, հայտարարեց, որ ինքը փոխում է Լեռնային Ղարաբաղի ինքնավարության կարգավիճակը... Ադրբեջանը հայտարարեց նաև Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաքի անունը թուրքական անունով փոխելու իր մտադրությունը... Թուրքիայի մեծ ցեղասպանության Այսրկովկասի կտորաներից և Նախիջևանի «էթնիկ մաքրման» ոչնչացման սպառնալիքներն կախվեց Լեռնային Ղարաբաղի վրա» (էջ 66)։

Քերոլայն Քոքսը, առավելապես, լուրջ կասկածի տակ է դնում ԽՍՀՄ հետպերեստրոյկայան շրջանի իշխանությունների դեմոկրատական լինելու հանգամանքը։ Առանձնապես դրականորեն հանրահայտ, ԱՊՀ տարածքում բավական տխրահռչակ դարձած «гласность и перестройка» կարգախոսը կրող բառերին ճակատագրի քննիծադրով, թե Քերոլայն Քոքսի

միանգամայն ընդգծված տեղագրությամբ գրքում հաջորդում են «Հակահայկական բռնությունները», «Սումգայիթ», «Կիրովաբադ», «Բաքու», «Շրջափակում» մասերը. պատմության խաչուղը լինելով այդ լեռնոտ բարձրով վերնագիր ունեցող բաժինները: Գորբաչովյան կամ ընդհանուր պետական ուղեղային ու կարգադրային զուգահեռ, զարգացվում է Ա. Սախարովի՝ դոկին պաշտպանողի ազատ կամքի քննարկումը: «Սախարովի առաքելությունը» (էջ 55—58) Ղարաբաղ հնարավորություն տալ նրան՝ Ղարաբաղի հանդեպ Կրեմլի քաղաքականությունը և ռուսիչ վերը ընթանում նկատել վերակառուցման տապալումը: Ղարաբաղյան խնդրի շուրջ խորհրդային իշխանությունների նախ կրավորական, ապա՝ Ղարաբաղի հայերի օրինական պահանջի հանդեպ բացասական դիրքորոշումը նախ լուռ կասկածներ առաջացրին Ա. Սախարովի մեջ՝ նոր իշխանությունների իրական դեմոկրատականության վերաբերյալ, ապա «КОЛЬЦО» ռազմի հակամարդկային քաղաքականության օպերացիա ականատես լինելուց հետո ամրապնդվեց նրա համոզմունքը՝ դեմոկրատիայի տապալվելու մասին: Քերոլայն Քոքսը հետևողականորեն նկարագրում է Ա. Սախարովի այցերը Հայաստան և Ադրբեջան, նրա բարձրացրած ահազանգերը և նրա ապրած խոր հիասթափությունը:

Իր հասարակական գործունեության ընթացքի օրինակով թեկնածությամբ ծանոթանալով Ղարաբաղի խնդրին, որանից հետո հայոց պատմության բախտորոշ դրվագներին, բազմաթիվ անգամներ այցելելով Հայաստան ու Ղարաբաղ, լեդի Քերոլայն Քոքսը պատկերացումների որոշակի համակարգ է ստեղծել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի մասին, որն իր գրքում ամփոփվել է «Լեռնային Ղարաբաղի ժողովրդի բնորոշ առանձնահատկությունները» գլխում և որոնք, ըստ նրա, լեռնաղարաբաղցիների որակներն են: Դրանք են՝ մեծահոգությունը, քաջությունը, կենսունակությունը, սեփական արժանապատվության զգացումը, ատելության բացակայությունը: Քերոլայն Քոքսը գտնում է, որ այս հատկանիշները պետք հաշվի առնվեն քաղաքական հաշվարկներում:

Հ. Ո. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու